կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապա, նմանօրինակ այցերը կարեւոր խթան նկատելով երկուստեք հարաբերությունների զարգացման համար, կարեւորեց երկու երկրների միջեւ սերտացող համագործակցությունը, ինչը պիտի նպաստի հայ եւ թուրքմեն ժողովուրդների բարօրությանը:

Նորին Սրբությունը նաեւ վերհիշեց պրն Խիդիր Սապարլիեւի պաշտոնավարման շրջանը Հայաստանում իբրեւ Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան՝ մասնավորապես անդրադառնալով Մայր Աթոռի եւ Թուրքմենստանի դեսպանատան միջեւ առկա ջերմ հարաբերություններին:

Իր երախտագիտությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ փոխվարչապետ Սապարլիեւը ուրախությամբ հաստատեց, որ այցը լավ առիթ էր վերանորոգելու իր բարեկամությունը: Փոխվարչապետը Նորին Սրբությանը ներկայացրեց նաեւ իր այցի մանրամասները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Ապրիլի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքները շարունակող «Կոմունիզմի «դասերն» եկեղեցիներին» միջազգային գիտաժողովի մասնակիցներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռի եւ առհասարակ Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունն աշխարհասփյուռ հայության կյանքում: Ի մասնավորի Նորին Սրբությունն անդրադարձավ Եկեղեցու հանդեպ խորհրդային իշխանությունների դրսեւորած ժիտական վերաբերմունքին եւ բացասական ազդեցությանը հոգեւոր կյանքի վրա, ինչպես նաեւ այդ շրջանում Եկեղեցու առջեւ ծառացած դժվարություններին: «Այդ ժիտական կեցվածքի պայմաններում նույնիսկ մենք կարողանում էինք գոնե նվազագույն գոյապահպանություն ապահովել Եկեղեցու համար շնորհիվ լուսահոգի Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ով կարողացել էր տեղի պետական եւ կուսակցական առաջնորդների հետ իր հարաբերությունների շնորհիվ մեղմացնել Եկեղեցու վրա դրված որոշ սահմանափակումներ», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ Եկեղեցին դեռ շատ անելիքներ ունի՝ կոմունիստական իշխանությունների ժամանակաշրջանին գործված հոգեւոր ավերները վերացնելու ուղղությամբ:

Գիտաժողովի մասնակիցներն երախտագիտություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին իրենց ընդունելու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Միջազգային ժողովի մասնակիցները Վեհարանում